ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Վեդի, Թումանյան փ., շ. 6, Հեռ. +(374)60881111, vedimunicipality@gmail.com

N 3679

25 հոկտեմբեր 2024թ.

«ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» - ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի/ամբողջությամբ/ լուծելու մասին

ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի և «Ֆաստ Գլոբալ Սոլուշնս» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 2024թվականի օգոստոսի տասներկուսին կնքվել է «ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-24/07» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր) որի, 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վեդու համայնքապետարանի կարիքների համար ծառայողական ավտոմեքենաների ընթացիկ վերանորոգման և սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետև՝ Պայմանագիր) սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:«Ֆաստ Գլոբալ Սոլուշնս»ՍՊ ընկերության կողմից չեն մատուցվել պայմանագրի №-1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանող ծառայությունը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՎԵԴՈՒ ՀԱՄԱՅՆԱՊԵՏԱՐԱՆԻ
ՍԵՆԱԿԱՊԵՏ
№-3679

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»: Պայմանագրի 2.1.3. կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի),եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը. Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի №-1 հավելվածով նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանող պահանջներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Վեդու համայնքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի լուծում է պայմանագիրը 3097500/երեք միլիոն ինսունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշում ստանալու հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմիցորոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող

հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ Ընկերության Պայմանագրի և որակավորման ապահովման գումարների Պատվիրատուի 900425102093 հաշվեհամարին սահմանված ժամկետներում վճարելու դեպքում Ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը չի ներկայացվի լիազոր մարմնին:

Պայմանագրի և որակավորման ապահովումները կանխիկ ձևով վճարված լինելու դեպքում՝ անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն Ընկերության կողմից ուղղված դիմումի պատճենը՝ ապահովման գումարները Պատվիրատուի՝ նշված հաշվեհամարին փոխանցելու մասին: Նված գումարների վճարումը պետք է իրականացվի լիազոր մարմնին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը:

Ցանկանում ենք փաստել նաև, որ ընթացակարգի հրավերով հայտի ապահովման ներկայացման պահանջ առկա չէ և սույն որոշման կայացման պահին Ընկերության կողմից հայտի ապահովում չի վճարվել Պատվիրատուին:

Հարգանքով՝ **ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

Կապ. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ (ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳԵՌՎ)՝ Անահիտ Հակոբյան
+(374)60881111